ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 22.04.2026թ. N 235/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.05.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գևորգյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Կ.Բայբուրտյանը, Գ.Երեղյանը, Ա.Բոյախչյանը, Լ.Հարությունյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գևորգյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացրել Արտավազդ Սարոյան ԱՁ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը: Հաշվի առնելով, որ «Արտավազդ Սարոյան ԱՁ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է)՝

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Արտավազդ Սարոյան ԱՁ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած» Արտավազդ Սարոյան ԱՁ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հաստատված ծառայության մատուցման համար սահմանված միավոր գների հանրագումարը՝

- Արտավազդ Սարոյան ԱՁ-ին 1-ին և 2-րդ չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:

3. ՊԵԿ-ԳՀԾՁԲ-26/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից Արտավազդ Սարոյան ԱՁ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով Արտավազդ Սարոյան ԱՁ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գևորգյան

Անդամներ՝ Կ.Բայբուրտյան

Գ.Երեղյան

Ա.Բոյախչյան

Լ.Հարությունյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան